**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասի 4-րդ և 5-րդ շենքերի դիմացի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/21 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի ապրիլի 27-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հուլիսի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Մեծամորի համայնքապետարանի և «Մաքուր Շին» ՍՊԸ և «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ կոնսորցիում-ի միջև 2026 թվականի ապրիլի 27-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/21 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Մեծամորի համայնքապետարանի և «Մաքուր Շին» ՍՊԸ և «ԷՄԹԻԵՅ» ՍՊԸ կոնսորցիում-ի միջև 2026 թվականի ապրիլի 27-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/21 պայմանագրի.

- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ժամկետը*» սյունակում նշված աշխատանքի կատարման ժամկետը 1-ին չափաբաժնի մասով խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ՝ «Կողմերի միջև պայմանագիրն ուժի մեջ մտնելու, ինչպես նաև տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 95 օրացուցային օրվա ընթացքում՝ համաձայն Հավելված թիվ 1-ով ներկայացվող օրացուցային գրաֆիկի»:
- Պայմանագրի Հավելված թիվ 2-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ների փոխարեն հիմք ընդունել և հաստատել Հավելված 1-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ը:

**Փոփոխության հիմնավորում.** Հիմք ընդունելով Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**